ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2021 թվականի №Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի №38Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱՐՓԻՆԵ ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հուլիսի 9-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 26-ի «ԱՐՓԻՆԵ ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արփինե-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №38Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 6-րդ կետում «1200» թիվը փոխարինել «1250» թվով:
2. «ԱՐՓԻՆԵ ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 125 000 (հարյուր քսանհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի փետրվարի 6-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՓԻՆԵ ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հուլիսի 2021թ.